

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ /CIVIL PROCEDURE/  
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

ՍԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական  
դատավարության ամբիոնի դոցենտ,

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, ի.գ.թ.

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական

իրավաբանական խորհրդավարության կենտրոնի դասախոս-կոորդինատոր,

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի  
անդամ, ի.գ.թ.

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական

SERGEY MEGHRYAN

*Associate Professor at the Chair of Civil Procedure of Yerevan State University, Chief  
Compulsory Enforcement Officer of the Republic of Armenia, Candidate of Law*

TIGRAN MARKOSYAN

*Lecturer-Coordinator at the Student Law Counselor Center of the Faculty of Law  
of Yerevan State University, Member of the State Commission for the Protection of  
Economic Competition of the Republic of Armenia, Candidate of Law*

ELINA GEGHAMYAN

*Assistant of the Chief Compulsory Enforcement Officer of the Republic of Armenia*

СЕРГЕЙ МЕГРЯН

*Доцент кафедры гражданского процесса юридического факультета*

*Ереванского государственного университета,*

*Главный принудительный исполнитель Республики Армения, кандидат  
юридических наук*

ТИГРАН МАРКОСЯН

*Преподаватель-координатор Центра студенческих юридических  
консультаций юридического факультета ЕГУ, член Государственной комиссии  
по защите экономической конкуренции Республики Армения, кандидат*

*юридических наук*

ЭЛИНА ГЕГАМЯН

*Ассистент главного принудительного исполнителя Республики Армения*

**«ՊԱՐՏԱԴԻՐ» ՀԱԿՐՆԴԴԵՄ ՀԱՅՑԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**THE PROBLEMS OF APPLICATION OF THE “COMPULSORY”  
COUNTERCLAIM INSTITUTE IN CIVIL PROCEDURE**

**ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ИНСТИТУТА «ПРИНУДИТЕЛЬНОГО»  
ВСТРЕЧНОГО ИСКА В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ**

«Հ քաղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> (այսուհետ նաև ՔԴՕ) նորոյթներից է «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը, որի ուժով անձի դեմ հայց հարուցվելու պահից այդ հայցի բավարարումը ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառող հայց հարուցելու նրա իրավունքը փոխակերպվում է բացառապես հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի: Ընդ որում, պատասխանողի կողմից հակընդդեմ հայց հարուցելու իրավունքը սահմանված կարգով չիրակա-նացվելու դեպքում այն դիտարկվում է դատավարական անգործությամբ (լռու-թյամբ) տնօրինված և հանգեցնում է պատասխանողի հայցի իրավունքի դատա-վարական կողմի, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի դադարման: Ըստ այդմ, «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը կոչված է ապահովելու իրավա-կան որոշակիության, «res judicata», դատավարական խնայողության և կոնցենտ-րացիայի, դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքների, դատական ակտերի նախադատելիության հատկանիշի, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը<sup>2</sup>:

Գաղտնիք չէ, որ իրավական պաշտպանության ցանկացած միջոց պետք է լի-նի արդյունավետ ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլև պրակտիկայում: Այդ պատճառով առանձնակի կարևորություն ունի «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի կիրառման իրավաչափության պայմանների քննարկումը և:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի կիրառության համատեքս-տում առանցքային նշանակություն ունի հակընդդեմ հայցի ներկայացման ժամ-կետը, որը քաղաքացիադատավարական օրենսդրության փոփոխություններին համընթաց ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Այսպես, ՀՀ նախկին քա-ղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>3</sup> 96-րդ հոդվածի 1-ին մասի համա-ձայն՝ պատասխանողն իրավունք ուներ հակընդդեմ հայց հարուցել մինչև գործով վճիռ կայացնելը: Այս իրավակարգավորումը պրակտիկայում հանգեցնում էր մի շարք խնդիրների, որոնք հանգում են հետևյալին.

<sup>1</sup> Ընդունվել է 09.02.2018 թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16 (1374) Հոդ. 208:

<sup>2</sup> Առավել մանրամասն տե՛ս Մեղոյան Ս.Գ., Մարկոսյան Տ.Ա., Գեղամյան Է.Կ., «Պարտադիր» հակընդ-դեմ հայցի ինստիտուտի իրավական քննությունը և գոյաբանական հիմքերը քաղաքացիական դատավա-րությունում // «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 2020, № 2 (51):

<sup>3</sup> Ընդունվել է 17.06.1998: Ուժը կորցրել է 09.04.2018 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20.53:

1. Գործի դատաքննության փուլում հակընդդեմ հայց ներկայացնելու արդյունքում դատարանը ստիպված էր լինում կրկին ձեռնամուխ լինել գործի դատաքննության նախապատրաստական գործողությունների իրականացմանը՝ ի հակադրություն դատավարական խնայողության սկզբունքի: Ընդ որում, օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում չլուծված էր այն հարցը, թե ինչ փուլում է գտնվում դատավարությունը, մասնավորապես, դատարանը վերադառնում է գործի դատաքննության նախապատրաստության փուլ, թե՛ դատաքննության փուլում պարզապես իրականացնում է նախապատրաստության փուլին բնորոշ գործողություններ: Ավելին, հստակ չէր այն հարցը, թե գործի դատաքննության նախապատրաստությանը վերադարձը իրականացվում էր միայն հակընդդեմ հայցի, թե գործի ամբողջ ծավալով:

2. Հակընդդեմ հայցը գործի դատաքննության ընթացքում ներկայացնելու անսահմանափակ հնարավորությունը, երբ պատասխանողն այն կարող էր ներկայացնել դեռևս գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, թույլ էր տալիս հակընդդեմ հայցի իրավունքից օգտվել անբարեխղճորեն՝ անհարկի ձգձգելով գործի քննության ժամկետները: Պատահական չէ, որ ինչպես մասնագիտական գրականության մեջ<sup>4</sup>, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում նման դրսևորումները գնահատվել են որպես իրավունքի չարաշահում<sup>5</sup>:

3. Դատաքննության փուլում հակընդդեմ հայցի ներկայացումը հնարավորություն էր տալիս պատասխանողին ներկայացնելու այն ապացույցները, որոնք նա պետք է ներկայացրած լիներ սկզբնական հայցի առնչությամբ: Արդյունքում այս միջոցը քողարկված ձևով թույլ էր տալիս առերևույթ շրջանցել դատավարական օրենքի այն պահանջը, որ դատաքննությունը սկսելուց հետո լրացուցիչ ապացույց ներկայացվելու դեպքում կողմը կրում է այն նախկինում ներկայացնելու անհնարինությունը հիմնավորելու պարտականություն:

Վերոգրյալ հանգամանքներով պայմանավորված՝ քաղաքացիադատավարական նոր օրենսդրությամբ հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետն էականորեն սահմանափակվեց: Մասնավորապես, ՔԴՕ 140-րդ հոդվածի 1-ին մասը թույլատրում է հակընդդեմ հայց ներկայացնել միայն գործի դատաքննության նախապատրաստության փուլում, սակայն ոչ ուշ, քան ապացուցման պարտականության բաշխման մասին որոշում կայացնելը: Այս առումով ուշագրավ է, որ հակընդդեմ հայց հարուցելու ժամկետը դատավարության նախապատրաստության փուլով սահմանափակելու օգտին տեսակետներ արտահայտվել են նաև դատավարագիտության մեջ<sup>6</sup>:

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, *Попов В.В.*, Встречный иск как форма злоупотребления процессуальными правами (հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.kmcon.ru/articles/jurist4\\_2381.html](https://www.kmcon.ru/articles/jurist4_2381.html), 23.08.2020 թ. դրությամբ):

<sup>5</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/1035/02/08 քաղաքացիական գործով 27.12.2010 թ. որոշումը:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, *Каменков В.С.*, Встречный иск - не только средство защиты ответчика // Российская юстиция. - 2009. №5, էջ 34, *Малюкина А.В.*, Концентрация процесса - основа своевременного и правильного рассмотрения гражданского дела. - М.: « Городец», 2009, էջ 117, *Молева Г.В.*, Право на судебную защиту ответчика. Дис. ... к.ю.н. - Саратов, 1993, էջեր 67-68, *Попов В.В.*, Встречный иск как форма реализации принципов гражданского процессуального права (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://ex-jure.ru/law/>

Ինչպես նշվեց, «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի ուժով սահմանված կարգով հակընդդեմ հայցի չհարուցումը հանգեցնում է պատասխանողի հայցի իրավունքի դատավարական կողմի, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի դադարման: Այլ կերպ ասած՝ պատասխանողի կողմից հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի իրականացումից հրաժարումն ունենում է էստոպելային հետևանք<sup>7</sup>:

Առհասարակ, էստոպելի կանոնի առկայությունը ենթադրում է համապատասխան իրավունքի գոյության և այն չիրականացնելու հետևանքների մասին իրավատիրոջ պատշաճ իրազեկվածություն: Այս հանգամանքը պայմանավորված է նախևառաջ նրանով, որ «սուբյեկտիվ իրավունքն իրականացնելուց հրաժարվելն իրավաչափ է, եթե հրաժարվելու մասին դիրքորոշումը (ցանկությունը) ծագել է կոնկրետ իրավահարաբերության շրջանակում, այն գիտակցված է, կամային, իսկ իրավունքից հրաժարվող անձն իրազեկված է հրաժարման հետևանքների մասին»<sup>8</sup>: ԱՄՆ դատական պրակտիկայում արտահայտվել է այն դիրքորոշումը, որ անուղակի էստոպելի<sup>9</sup> իրացումը երաշխավորված է այն դեպքում, երբ էստոպելով սահմանափակված անձը նախկինում ունեցել է իր հարցի դատական քննության ամբողջական և արդարացի հնարավորություն<sup>10</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձը չի կարող համարվել իրավունքից հրաժարված, եթե վերջինս տեղեկացված չի եղել այդ իրավունքի և համապատասխան ընթացակարգերի մասին<sup>11</sup>: Դատական պաշտպանության իրավունքի ժամկետային սահմանափակումների վերաբերյալ իր դիրքորոշումներով ևս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ամրապնդել է այն գաղափարը, որ այն դեպքում, երբ իշխանության մարմինները ոչ բավարար տեղեկատվություն են տրամադրել ժամանակային սահմանափակումների մասին, ներպետական դատարանները պետք է բավարար չափով ուշադրություն հատկացնեն գործի հանգամանքներին և չմեկնաբանեն նորմերը չափազանց խիստ<sup>12</sup>:

news.php?newsid=1026, 23.08.2020 թ. դրությամբ), *Комаров И.С.*, Защита ответчика в гражданском и арбитражном процессе. Дис. ... к.ю.н., Екатеринбург, 2012, էջեր 112-113:

<sup>7</sup> Էստոպելի կանոնը (անգլերեն՝ estoppel) առանձին ոլորտներում սուբյեկտիվ իրավունքը հայեցողությամբ իրականացնելու կանոնից բացառություն է և ենթադրում է անձի նախորդող վարքագծի (այդ թվում՝ իրավունքից հրաժարվելու) հետևանքով առարկություն(պահանջ)ներ ներկայացնելու կամ որոշակի փաստերի վրա հիմնվելու իրավունքից զրկում (առավել մանրամասն տես *Ղամբարյան Ա.*, Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2018, էջ 113, *Alexander Ovchar*, Estoppel in the Jurisprudence of the ICJ A principle promoting stability threatens to undermine it, *Bond Law Review*: Vol. 21: Iss. 1, Article 5, էջ 35 (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www5.austlii.edu.au/au/journals/BondLawRw/2009/5.html>, 24.07.2020 թ. դրությամբ):

<sup>8</sup> Տես, օրինակ, *Ղամբարյան Ա.*, Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2018, էջ 126:

<sup>9</sup> Անգլերեն՝ collateral estoppel, տես [https://www.law.cornell.edu/wex/collateral\\_estoppel](https://www.law.cornell.edu/wex/collateral_estoppel) (24.07.2020 թ. դրությամբ):

<sup>10</sup> Տես *Intellectual Ventures I, LLC v. Capital One Financial Corporation*, Case No. 18-1367 (Fed. Cir. Sept. 10, 2019) (Bryson, J) (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://casetext.com/case/intellectual-ventures-i-llc-v-capital-one-fin-corp-7>, 27.07.2020 թ. դրությամբ):

<sup>11</sup> Տես *Case of Schmidt v. Latvia*, § 96 (Application no. 22493/05), 27.04.2017 թ.:

<sup>12</sup> Տես *Case of Clavien v. Switzerland* (Application no. 16730/15), 12.09.2017 թ. և *Case of Gajtani v. Switzerland* (Application no. 43730/07), 09.09.2014 թ. որոշումները:

Զարգացնելով վերոշարադրյալ դիրքորոշումները՝ կարելի է եզրահանգել նաև, որ իրավակիրառ մարմինը կրում է ոչ միայն իրավատիրոջը համապատասխան իրավունքի գոյության և դրա չիրականացման հետևանքների մասին առաջին անգամ իրազեկելու, այլև դրանից հետո իրավատիրոջ կողմից չկողմնորոշված վարքագծի դրսևորումների առնչվելու դեպքում վերջինիս «պարտադիր» հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի և դրա չիրականացման հետևանքի լրացուցիչ պարզաբանման պարտականություն: Այսպես, օրինակ՝ դատական պրակտիկայում հանդիպում են բազմաթիվ դեպքեր, երբ պատասխանողը, չնայած այն հանգամանքին, որ հայցադիմումի պատասխանի, գրավոր կամ բանավոր առարկությունների միջոցով բարձրաձայնում է «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման հիմք հանդիսացող այնպիսի հանգամանքներ, որոնց հաստատումը կարող է հիմք լինել սկզբնական հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու համար, սակայն չի ներկայացնում հակընդդեմ հայց, քանի որ չի գիտակցում, որ տվյալ պայմաններում իր իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցը հակընդդեմ հայցն է, և առարկության հիմքով սկզբնական հայցի մերժման և իր պահանջների բավարարման չի կարող հասնել:

Վերոշարադրյալի լույսի ներքո ակնհայտ է, որ «պարտադիր» հակընդդեմ հայցի կանոնի կիրառության իրավաչափության ապահովման համար նախևառաջ կարևորվում են սկզբնական հայցով պատասխանողի համար այս կանոնի և դրա իրավական հետևանքների մատչելիությունը, կանխատեսելիությունը, որոնց պարագայում միայն պատասխանողի վարքագիծը կարող է որակվել գիտակցված և կամային: Հետևաբար, քննարկվող ինստիտուտի իրավաչափ իրացման երաշխավորման առումով պահանջվում է դատարանի որոշակի ակտիվ դերակատարում, որը պետք է դրսևորվի հետևյալ կերպ.

1. հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը պատասխանողին ուղարկելուն զուգահեռ «պարտադիր» հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի մասին գրավոր պարզաբանում և այն չներկայացնելու հետևանքների մասին գրավոր նախազգուշացում.

2. սկզբնական հայցի ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարման բացառմանն ուղղված առարկությունները հակընդդեմ հայցի ձևով ներկայացման ենթակա լինելու դեպքում այդ մասին դատարանի կողմից պատասխանողին լրացուցիչ պարզաբանում:

Հարկ է նշել, որ դատարանի նման գործողությունների նորմատիվ հիմք են ՔԴՕ 13-րդ հոդվածի 2-րդ մասը և 148-րդ հոդվածի 4-րդ մասը: Մասնավորապես, ՔԴՕ 13-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին օժտում է անհրաժեշտության դեպքում գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձանց նրանց իրավունքները և պարտականությունները պարզաբանելու, դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին նախազգուշացնելու լիազորությամբ, իսկ ՔԴՕ 148-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը գործին մասնակցող անձանց կարող է գրավոր պարզաբանել իրենց իրավունքները, պարտականությունները և դրանց իրացման կարգը: Ընդ որում, վստահաբար կարելի է պնդել, որ քննարկվող դեպքը վկայում է համապատաս-

խան անհրաժեշտության մասին, ինչպիսի պայմաններում դատարանի հայեցողությունը պետք է դիտարկվի որպես պարտականություն:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի կիրառման հաջորդ խնդիրն այն է, թե արդյոք այն կարող է ներկայացվել ապացուցման պարտականության բաշխման մասին որոշում կայացնելուց հետո, և եթե այո, ապա՝ որ դեպքերում:

«Պարտադիր» հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետի, ինչպես ցանկացած այլ դատավարական ժամկետի բացթողումը, հանգեցնում է այդ ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքի դադարման: Սակայն հարկ է նկատել, որ դատավարական ժամկետի բացթողումն առհասարակ հիմք է ոչ թե նյութական իրավունքի դադարման, այլ այդ իրավունքի հարկադիր պաշտպանության դադարման համար: Ինչպես նշում է Բ. Ա. Ֆեդորովիչը. «Այդ ժամկետն անհրաժեշտ է տարբերակել իրավադադարեցնող ժամկետից, որի լրանալը հանգեցնում է անձի նյութական իրավունքի դադարեցման: Քննարկվող ժամկետի ընթացքում դատարանն իրականացնում է խախտված իրավունքների հարկադիր պաշտպանություն, իսկ դրա լրանալու կապակցությամբ դատական պաշտպանության դիմած անձի հայցի մերժումը չի ազդում անձի իրավունքի գոյության վրա<sup>13</sup>»:

Միաժամանակ չպետք է բացառել դատավարական ժամկետները հարգելի պատճառներով բաց թողնելու հնարավոր դեպքերը: Այդ պատճառով օրենսդիրը նախատեսել է շահագրգիռ անձի միջնորդությամբ դատավարական ժամկետները վերականգնելու ընթակարգ, որը հավասարապես կիրառելի է նաև հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետի վերականգման առնչությամբ ծագող դատավարական հարաբերությունների նկատմամբ: Այսպես, ՔԴՕ 119-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատավարական ժամկետների վերականգնման ինստիտուտին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Դատավարական ժամկետը բաց թողնելու հնարավոր պատճառներն օրենքով օբյեկտիվորեն կանխորոշված չեն, որի պայմաններում դրանք գնահատելու և արդյունքում այդ ժամկետի բացթողումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու (գնահատման չափանիշներ ընտրելու) դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ»<sup>14</sup>: Մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառների դատական գնահատման հիմքում պետք է լինեն իրավական չափանիշներ՝ ելնելով իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից, բացառելով կամայական ու չհիմնավորված որևէ մոտեցում<sup>15</sup>: Միաժամանակ բացթողնված

<sup>13</sup> Տե՛ս *Федорович Б.А.*, О последствиях несоблюдения срока обращения в арбитражный суд с заявлением о признании ненормативного правового акта недействительным, 2010, էջ 2:

<sup>14</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 22.04.2008 թ. թիվ ՍԴՈ-752 որոշումը:

<sup>15</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 09.04.2007 թ. ՍԴՈ-690 որոշումը:

Ժամկետի վերականգնման հարցում դատարանը չպետք է դրսևորի չափազանց լայն հայեցողություն և առանց հիմնարար պատճառների հարգելի համարի դատավարական ժամկետի բացթողումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ ժամկետի խախտումով ներկայացված բողոքի ընդունումն այնպիսի հիմնավորումներով, որոնք յուրահատուկ համոզիչ չեն թվում, կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի և դատարանի մատչելիության իրավունքի խախտման<sup>16</sup>:

Անդրադառնալով հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերին՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հարգելի պատճառ պետք է համարել այնպիսի երևույթները, որոնք օբյեկտիվորեն զրկում են պատասխանողին հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությունից: Հակընդդեմ հայց չներկայացնելիս ժամկետի վերականգնման հարցում պատասխանողի սուբյեկտիվ հնարավորություններն ու ունակությունները չեն կարող գնահատվել որպես հարգելի պատճառ: Իրավական գիտելիքների բացակայությունը և փաստաբանի ոչ պատշաճ ծառայություններ մատուցած լինելու հանգամանքը չեն հիմնավորում Վերոնիկա Առաքելյանի մոտ հակընդդեմ հայցադիմումը ժամանակին ներկայացնելու անհնարինության մասին և հետևաբար չեն հիմնավորում ժամկետները վերականգնելու հարգելի պատճառների առկայության մասին<sup>17</sup>:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համադրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի բացթողումը կարող է հարգելի համարվել միայն այն բացառիկ դեպքերում, երբ սկզբնական հայցով պատասխանողը հիմնավորում է հայցը նախկինում ներկայացնելու օբյեկտիվ անհնարինությունը՝ այնպիսի հանգամանքների հիմքով, որոնք օբյեկտիվորեն զրկել են նրան հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությունից: Ընդ որում, ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմք կարող են լինել ինչպես պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու փաստական անհնարինությունը (օրինակ՝ հիվանդությունը), այնպես էլ իրավական անհնարինությունը, այսինքն՝ մինչ «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի լրանալը այդպիսի հայցի ներկայացման և բավարարման համար անհրաժեշտ փաստական տվյալների օբյեկտիվ իրականությունում բացակայությունը (օրինակ՝ դատաքննության նախապատրաստության փուլում ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջով գույքը բարեխիղճ, անընդմեջ և բացահայտ տիրապետման տասը տարին դեռևս լրացած չլինելը):

Հասկանալի է, որ, անկախ «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի բացթողման պատճառների բնույթից, պատասխանողը չի կարող սկզբնական հայցով վարույթի շրջանակում ակնկալել նման ժամկետի վե-

<sup>16</sup> Տե՛ս «Case of Magomedov and Others v. Russia» գործով ՄԻԵԴ-ի վճռի 87-89-րդ պարբերությունները, որում դիմումատուն վիճարկում էր իրավասու մարմինների կողմից բողոքի ընդունումը՝ առանց ժամկետի փաստացի երկարաձգման պատշաճ հիմնավորման:

<sup>17</sup> Տե՛ս Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/14194/02/18 քաղաքացիական գործով 31.05.2019 թ. որոշումը:

րականգնում այն բոլոր դեպքերում, երբ դատարանը կայացրել է սկզբնական հայցով եզրափակիչ դատական ակտ: Նման եզրահանգումը բխում է նաև հակընդդեմ հայցի էությունից, որը ենթադրում է սկզբնական հայցի հետ դրա համատեղ քննություն:

Թեպետ ՔԴՕ-ն ընձեռում է «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու իրավական հնարավորություն, այնուամենայնիվ, չի պատասխանում այն հարցին, թե ինչ հետևանք կարող է ունենալ դատաքննության փուլում ժամկետի բացթողումը հարգելի համարելը դատավարության հետագա ընթացքի համար: Մասնավորապես, արդյոք դատարանը նման դեպքերում պարտավոր է դադարեցնել դատաքննությունը և վերադարձ կատարել գործը դատաքննությանը նախապատրաստելու փուլին, թե պարտավոր է սկզբնական հայցի քննության մասով շարունակել դատաքննությունը և նախապատրաստական փուլին բնորոշ դատավարական գործողություններ կատարել միայն հակընդդեմ հայցի համար: Գործի արդյունավետ քննությունն ապահովելու և իրավունքի չարաշահման դեպքերը կանխարգելելու նկատառումներից ելնելով՝ հիմնավոր է թվում ՔԴՕ-ում «պարտադիր» հակընդդեմ հայցի մասով գործը դատաքննության նախապատրաստելու հնարավորություն ընձեռելու և դրա արդյունքներով միայն գործի դատաքննություն իրականացնելու պայմանի ամրագրումը:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի կիրառման տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի նաև այն հարցը, թե ինչպես պետք է վարվի դատարանը այն դեպքում, երբ պատասխանողը սկզբնական հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառելուն ունակ հայցը մինչև սկզբնական հայցով եզրափակիչ դատական ակտի կայացումը ներկայացնում է ինքնուրույն հայցի ձևով:

Նմանատիպ գործերով ԱՄՆ դատարանների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հիմնականում հանգում են նրան, որ «պարտադիր» հակընդդեմ հայցի կանոնը կարող է կիրառելի համարվել միայն այն դեպքում, երբ սկզբնական գործով առկա է վերջնական դատական ակտ: Մասնավորապես, ԱՄՆ գերագույն դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ, ի թիվս կողմերի նույնության և վեճի՝ միևնույն հիմքից ծագելու պայմանների, այս կանոնի կիրառման կարևորագույն նախապայման է նաև սկզբնական գործով վերջնական վճռի առկայությունը: Նույն գործով դատարանն արձանագրել է, որ «res judicata» սկզբունքի կիրառումը ևս պայմանավորված է վերջնական դատական ակտի առկայությամբ<sup>18</sup>: Մեկ այլ գործով ամերիկյան դատարանը «պարտադիր» հակընդդեմ հայցի կանոնը կիրառելի չի համարել, քանի որ սկզբնական գործի քննությունը դեռևս չէր ավարտվել, և պատասխանողը դեռևս այդ գործով հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորություն ուներ<sup>19</sup>: Երրորդ գործով դա-

<sup>18</sup> Տե՛ս «Lucky Brad Dungarees, et al. v. Marcel Fashion Group, Inc.» գործով ԱՄՆ գերագույն դատարանի որոշումը, էջ 30 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.supremecourt.gov/DocketPDF/18/18-1086/122111/20191112144946360\\_18-1086.bs.brief.pdf](https://www.supremecourt.gov/DocketPDF/18/18-1086/122111/20191112144946360_18-1086.bs.brief.pdf), 24.07.2020 թ. դրությամբ):

<sup>19</sup> Տե՛ս «Bunzl Distribution USA, INC., vs. John Schultz, Marcia Schultz, Allen Schultz, Jane Schultz, And Graymark Tissue Company, INC.» գործով Միսսուրիի շրջանային դատարանի որոշումը (հասանելի



տարանները վարույթ են ընդունել և քննել միևնույն անձանց միջև, միմյանց բացառող պահանջներով երկու գործեր: Ընդ որում, դատարանը երկրորդ գործով վարույթը կարճել է միայն առաջին գործով վերջնական դատական ակտի օրինական ուժ ստանալուց հետո<sup>20</sup>:

Ակնհայտ է, որ հիշատակված դիրքորոշումներն ընդունելի համարելու դեպքում մի կողմից իմաստագրվում է «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը, որի ուժով անձի հայցի իրավունքը փոխակերպվում է բացառապես հակընդդեմ հայցի իրավունքի, իսկ մյուս կողմից ստեղծվում է հակընդդեմ հայց հարուցելու ժամկետը շրջանցելու, ինչպես նաև սկզբնական հայցով գործի վարույթը կասեցնելու հնարավորություն, ինչն իր հերթին համատեղելի չէ քննարկվող ինստիտուտի հետապնդած նպատակների հետ:

Նման պայմաններում բարձրացված խնդրի լուծման տարբերակ է դիտարկվում որպես ինքնուրույն հայց ներկայացված «պարտադիր» հակընդդեմ հայցը սկզբնական հայցով վարույթին միավորելու տարբերակը: Ընդ որում, նման միավորումից հետո դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետը պահպանված լինելու հարցը, այն բացթողնված լինելու դեպքում վերականգնելու միջնորդություն ներկայացնելու ժամկետ սահմանի, որից հետո քննարկի գործի վարույթը շարունակելու կամ գործն առանց ըստ էության լուծելու ավարտելու հարցը:

Ե. Գ. Պուշկարը, անդրադառնալով գործի վարույթը կարճելու և հայցն առանց քննության թողնելու ինստիտուտների տարբերություններին և դրանց իրավական հետևանքներին, գրում է. «Գործի վարույթը կարճելը ենթադրում է, որ հայցվորի մոտ բացակայում են հայց ներկայացնելու իրավունքի իրականացման նախադրյալները, կամ որ գործի քննությունը շարունակելն անհնար կամ ոչ նպատակահարմար է: Մինչդեռ հայցն առանց քննության թողնելը վկայում է այն մասին, որ չնայած հայցվորն ունի հայց ներկայացնելու և դատական պաշտպանության իրավունք՝ այնուամենայնիվ, վերջինիս կողմից չեն պահպանվել այդ իրավունքի իրացման պայմանները: Գործի վարույթը կարճելու և հայցն առանց քննության թողնելու ինստիտուտների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին դեպքում հայցվորը չի կարող դատարանի կողմից իր գործով արդարադատության իրականացման հույս ունենալ: Մինչդեռ երկրորդ դեպքում արդարադատության իրականացումը հնարավոր է, սակայն այն կախված է հայցվորից, ով, ունենալով հայց ներկայացնելու իրավունք, չի օգտվել դրանից կամ ոչ պատշաճ է իրականացրել իր իրավունքը<sup>21</sup>»:

Վերոգրյալի լույսի ներքո կարելի է պնդել, որ բոլոր այն դեպքերում, երբ հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետը բաց թողնված լինելու պայմաններում

է հետևյալ հղմամբ՝ [https://www.govinfo.gov/content/pkg/USCOURTS-moed-4\\_05-cv-00605/pdf/USCOURTS-moed-4\\_05-cv-00605-0.pdf](https://www.govinfo.gov/content/pkg/USCOURTS-moed-4_05-cv-00605/pdf/USCOURTS-moed-4_05-cv-00605-0.pdf), 24.07.2020 թ. դրությամբ):

<sup>20</sup> Տե՛ս «ANDREW FALKENSTEIN vs. JOSHUA McGUIRE 2018 Mass. App. Div. 87», 2018 թվական (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://masscases.com/cases/distapp/2018/2018massappdiv87.html>, 24.07.2020 թ. դրությամբ):

<sup>21</sup> Տե՛ս *Пушкаръ Е.Г.*, Исковое производство в советском гражданском процессе (Процессуальные последствия возбуждения дел) Львов – 1978, 1978, էջ 185:

պատասխանողը համապատասխան միջնորդություն չի ներկայացնի, դատարանը պետք է «պարտադիր» հակընդդեմ հայցը թողնի առանց քննության, իսկ նման միջնորդություն ներկայացվելու և մերժվելու դեպքում՝ փաստի պատասխանողի հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի բացակայությունը և կարճի գործի վարույթը: Հետևաբար, այս մոտեցումներն ունեն համարժեք օրենսդրական կարգավորումների անհրաժեշտություն:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավաչափ կիրառությունը կարևորվում է ոչ միայն մինչև սկզբնական հայցի քննության ավարտը վերոնշյալ մոտեցումների պահպանման, այլև սկզբնական հայցով գործի քննության ավարտից հետո էստոպելի կանոնի և այն հաղթահարելու երաշխիքների հետևողական պահպանման տեսանկյունից:

ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ սկզբնական հայցով հայցվորի դեմ պատասխանողի հայց հարուցելու իրավունքը դադարում է սկզբնական հայցը բավարարող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից, և այդ պահից նա զրկվում է սկզբնական հայցի բավարարումը ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառող առանձին հայց հարուցելու հնարավորությունից, եթե հայց հարուցելիս չհիմնավորի, որ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի չիրականացումը պայմանավորված է եղել իրենից անկախ հանգամանքներով<sup>22</sup>: Ընդ որում, նման հիմնավորման բացակայությունը ՔԴՕ-ն դիտարկում է հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ ՔԴՕ-ն որևէ կարգավորում չի նախատեսում այն առնչությամբ, թե հակընդդեմ հայցը նախկինում հայցվորի կամ քից անկախ պատճառներով հարուցված չլինելու հիմնավորումը ինչ կարգով՝ միջնորդության, թե հայցադիմումում առանձին հիմնավորման տեսքով է ներկայացվում, ինչ կարգով է դատարանը գնահատում հայցվորի այդ փաստարկը, ինչպես նաև ինչ կարգով կարող է այդ գործով պատասխանողը, այսինքն՝ սկզբնական հայցով հայցվորը պաշտպանվել հայցադիմումը ոչ իրավաչափ վարույթ ընդունվելու դեպքերից:

Ենթադրվում է, որ նման իրավիճակների համար առավել արդյունավետ լուծում կարող է լինել դատավարական ժամկետների վերականգման ինստիտուտի կիրառելիության, իսկ դրա արդյունքների հետ անհամաձայնության դեպքում՝ դատավարական ժամկետի վերականգնումը բավարարելու կամ մերժելու մասին որոշման բողոքարկելիության մասին դրույթների ամրագրումը: Ընդ որում, այս լուծումը խորթ չէ դատավարական օրենսդրությանը, մասնավորապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը<sup>23</sup> արդեն իսկ նախատեսում է այս որոշումների բողոքարկման հնարավորություն:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի պարզաբանումը, թե արդյոք քննարկվող ինստիտուտի ուժով կարող է սկզբնական հայցով պա-

<sup>22</sup> Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Մարկոսյան Տ. Ա., Գեղամյան Է. Կ., «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական բնույթը և գոյաբանական հիմքերը քաղաքացիական դատավարությունում, «Արդարադատություն» պարբերական, 2020 2 (51), էջ 13:  
<sup>23</sup> Ընդունվել է 05.12.2013: Ուժի մեջ է մտել 07.01.2014: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013), 1 Հոդ., 1186.1:

տասխանողը զրկվել հետագայում սկզբնական հայցը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարումը բացառող հայց ներկայացնելու հնարավորությունից կամ կրել նման հայցը նախկինում ներկայացնելու անհնարինությունը հիմնավորելու պարտականություն այն դեպքերում, երբ սկզբնական հայցը հարուցվել է նախկին քաղաքացիադատավարական օրենսդրության, այսինքն՝ «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի բացակայության պայմաններում:

Միանշանակ է, որ ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմի գործողության տարածումը մինչև ՔԴՕ ուժի մեջ մտնելը հարուցված քաղաքացիական գործերի նկատմամբ ոչ իրավաչափ է և որևէ կերպ արդարացված համարվել չի կարող, քանի որ քննարկվող նորմին օրենսգրքի ընդունմամբ հետադարձ ուժ չի տրվել, դեռ ավելին, որպես անձի իրավական վիճակը վատթարացնող նորմ, դրան, առհասարակ, հետադարձ ուժ տրվել չէր կարող: Հետևաբար, նման դեպքում պատասխանողի համար «պարտադիր» հակընդդեմ հայց չներկայացնելու վարքագծի բացասական հետևանքը կանխատեսելի, իսկ հակընդդեմ հայց ներկայացնելուց հրաժարվելը՝ գիտակցված և կամային համարվել չի կարող, և վերջինս սկզբնական հայցի քննության ժամանակ իր վարքագիծն այդպիսի իրավակարգավորումներին համապատասխանեցնելու, արգելքները ողջամտորեն հաշվի առնելու պարտականություն չէր կարող կրել: Ուստի «պարտադիր» հակընդդեմ հայցի կանոնը կիրառելի կարող է համարվել բացառապես քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո և դրա կիրառմամբ քննված գործերի նկատմամբ և չի կարող կիրառելի համարվել մինչև ՔԴՕ ուժի մեջ մտնելու հարուցված սկզբնական հայցերի առնչությամբ:

Ուշագրավ է, որ «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի կիրառելիության նման սահմաններ ուրվագծվել են նաև Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից: Մասնավորապես, Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործերից մեկով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Սույն քաղաքացիական գործով հայցը հարուցվել և քննվել է 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որով գործի նոր քննության ընթացքում հակընդդեմ հայց հարուցելու, ինչպես նաև գործի նախորդ քննության ընթացքում օրենսգրքով սահմանված հիմքով հակընդդեմ հայց չներկայացնելու հետևանքով հետագայում այդպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից զրկվելու օրենսդրական կարգավորումներ (արգելքներ), որպիսիք նախատեսված են 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (հոդվածներ 140, 413), նախատեսված չեն եղել, հետևաբար իր վարքագիծը այդպիսի իրավակարգավորումներին համապատասխանեցնելու, արգելքները ողջամտորեն հաշվի առնելու պարտականություն պատասխանողը չէր կարող կրել»<sup>24</sup>:

Հակընդդեմ հայցի ինստիտուտին մասով ընդհանրապես, և «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի մասով, մասնավորապես, քննարկման կարիք ունի այն հարցը, թե արդյոք գործը նոր քննության ուղարկվելու դեպքում կարող է

<sup>24</sup> Տե՛ս Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱՐԴ/1273/02/17 քաղաքացիական գործով 24.01.2020 թ. որոշումը:

ներկայացվել հակընդդեմ հայց:

Հարկ է նկատել, որ այս առումով ՔԴՕ կարգավորումները պարունակում են հարցի բացասական պատասխան: Այնինչ նման իրավիճակը, երբ առանց որևէ բացառության, արգելվում է հակընդդեմ հայցի ներկայացումը չի կարող հիմնավոր համարվել և կարելի է դիտարկել անձի արդյունավետ դատական պաշտպանության սահմանափակում: Տեղին է հիշատակել Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի՝ այն դեպքերում, երբ չի ապահովվում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու և այն ամբողջ ծավալով քննության առարկա դարձնելու հնարավորությունը, ոչ իրավաչափորեն սահմանափակվում է արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը<sup>25</sup>: Հետևաբար, այստեղ ևս առկա է համապատասխան լուծումների ներդրման անհրաժեշտություն:

**Այսպիսով, «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի կիրառման հիմնահարցերի վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.**

**1. «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի, այդ թվում՝ դրա էստիմացիային հետևանքի, իրավաչափ կիրառումը ենթադրում է դատարանի ակտիվ դերակատարում, որը ներառում է.**

- **հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը պատասխանողին ուղարկելուն զուգահեռ «պարտադիր» հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի մասին գրավոր պարզաբանելու և այն չներկայացնելու հետևանքների մասին գրավոր նախազգուշացնելու դատարանի պարտականությունը.**
- **սկզբնական հայցի ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարման բացառմանն ուղղված առարկությունները հակընդդեմ հայցի ձևով ներկայացման ենթակա լինելու դեպքում այդ մասին պատասխանողին լրացուցիչ պարզաբանելու դատարանի պարտականությունը:**

**2. Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելուց հետո «պարտադիր» հակընդդեմ հայցը կարող է վարույթ ընդունվել միայն այն ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին պատասխանողի միջնորդությունը բավարարվելու դեպքում: Ընդ որում, նման միջնորդություն չի կարող ներկայացվել սկզբնական հայցով գործի քննությունն ավարտվելուց հետո:**

**3. «Պարտադիր» հակընդդեմ հայցը գործի դատաքննության փուլում վարույթ ընդունվելու դեպքում դատարանը օրենսդրական փոփոխությունների արդյունքում պետք է ունենա այդ մասով գործը դատաքննության նախապարաստելու և միայն դրանից հետո գործի դատաքննություն իրականացնելու հնարավորություն:**

**4. Անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնք կսահմանեն «պարտադիր» հակընդդեմ հայցը մինչև սկզբնական հայցով եզրա-**

<sup>25</sup> Տես Սահմանադրական դատարանի 18.10.2016 թ. թիվ ՍԴՈ-1315 որոշումը:

փակիչ դատական ակտի կայացումը ինքնուրույն հայցի ձևով ներկայացվելու դեպքում որպես ինքնուրույն հայց ներկայացված «պարտադիր» հակընդդեմ հայցը սկզբնական հայցով վարույթին միավորելու դատարանի հնարավորությունը: Ընդ որում, նման միավորումից հետո դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի պահպանված լինելու հարցը, այն բացթողնված լինելու դեպքում դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու ժամկետ սահմանի, իսկ այդպիսի միջնորդություն չներկայացվելու կամ ներկայացված միջնորդությունը մերժվելու դեպքում, համապատասխանաբար, առանց քննության թողնի «պարտադիր» հակընդդեմ հայցը կամ այդ մասով գործի վարույթը կարճի:

5. Սկզբնական հայցը բավարարող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից դրա ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարումը բացառող հայցը վարույթ ընդունելիս օրենսդրական համարժեք կարգավորումների ներդրման արդյունքում պետք է կիրառելի լինի դատավարական ժամկետների վերականգման ինստիտուտը, իսկ դատավարական ժամկետի վերականգնումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումները պետք է ենթակա լինեն բողոքարկման:

6. «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը, այդ թվում՝ դրա էստոպպելային հետևանքը, կիրառելի չէ մինչև «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի ներդրումը, այսինքն՝ ՔԴՕ ուժի մեջ մտնելը, հարուցված սկզբնական հայցերի նկատմամբ:

7. Դատավարական օրենքը պետք է գործի նոր քննության ժամանակ թույլատրի հակընդդեմ, այդ թվում՝ «պարտադիր» հակընդդեմ հայցի ներկայացումը, եթե հակընդդեմ հայցով հայցվորը հիմնավորում է նախկինում հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պարճառներով:

**Annotation.** Every means of legal protection should be efficient not only at the legislative stage, but also practically. The core problems of the need for the active role of a judge for lawful application of the “compulsory” counterclaim institute and its estoppel retraction, cases, order and consequences of the restoration of the term to file a “compulsory” counterclaim are discussed in this scientific article. The consequences of filing the “compulsory” counterclaim in a separate procedure during the examination of the initial claim and after the turning into legal force of the judicial act satisfying the initial claim are also examined in this scientific article. In result, in the context of lawful application of the “compulsory” counterclaim institute, authors emphasize, on the one hand, the need for the active role of the judge, and on the other hand, the need to review the existing legal regulations and legal practice.

**Аннотация.** Каждое средство правовой защиты должно быть эффективным не только на законодательном уровне, но и в практике. В работе анализируются основные проблемы необходимости активной роли судьи в вопросе правомерного применения института «принудительного» встречного иска и его эстоппельского следствия, случаи, порядок и последствия восстановления пропущенного срока предъявления «принудительного» встречного

иска. В работе рассматриваются последствия предъявления «принудительного» встречного иска в отдельном производстве при рассмотрении первоначального иска и после вступления в юридическую силу судебного акта, удовлетворяющего его. В результате проведенного исследования, авторы в контексте законного применения института «принудительного» встречного иска подчеркивают, с одной стороны, необходимость активной роли судьи, а с другой стороны – необходимость пересмотра существующих правовых норм и правовой практики.

**Բանալի բառեր** - «պարտադիր» հակընդդեմ հայց, էստոպել, «compulsory counterclaim», դափարանի ակտիվ դերակադարում, բաց թողնված ժամկետի վերականգնում:

**Keywords:** *compulsory counterclaim, estoppel, active role of judge, restoration of the missed term.*

**Ключевые слова:** «принудительный» встречный иск, эстоппель, compulsory counterclaim, активная роль суда, восстановление пропущенного срока.

**Ս. Մեղրյան** - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, ի.գ.թ., էլ. հասցե՝ meghryan@ysu.am:

**Տ. Մարկոսյան** - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական իրավաբանական խորհրդատվության կենտրոնի դասախոս-կոորդինատոր, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ, ի.գ.թ., էլ. հասցե՝ tigranmarkosyan@ysu.am:

**Է. Գեղամյան** - ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական, էլ հասցե՝ elinageghamyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 31.09.2020 թ., տրվել է գրախոսության 31.09.2020 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վահագն Գրիգորյանի կողմից, ընդունվել է տպագրության 14.09.2020 թ.: